ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» սեպտեմբերի 2011թ. **N --- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 45,000.0 հազար դրամ Երևան քաղաքում անշարժ գույքի հասցեավորման և համարակալման ցուցանակների պատրաստման և տեղադրման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը մարդահամար անցկացնելու կազմակերպչական աշխատանքների շրջանակներում նախատեսվում է Երևանի վարչական շրջաններում թվով 993 փողոցներում 18763 շենքերի և շինությունների համարակալման աշխատանքներ իրականացնել: Նշված աշխատանքներն իրենից ներկայացնում են փողոցների անվանման և շենքերի թվագրման ցուցանակների պատրաստում և տեղադրում, որոնց համար, համաձայն հաշվարկ–հիմնավորումների, անհրաժեշտ է շուրջ 45,000.0 հազար դրամ, ինչն էլ նախատեսվում է հատկացնել «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել մինչև 45,000.0 հազար դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ